ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՋԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԼՐԱՑՄԱՆ

Կիրառական հետազոտությունների*

- **արդյունքի (արտադրանքի)****

✓ ***նկարագրությունը, հիմնական տեխնիկական բնութագրիչները, մրցակցային առավելությունները, կիրառության ոլորտը*** *- ներկայացնել ակնկալվող արդյունքի (արտադրանքի) տեխնիկական բնութագրերը, այդ թվում՝ համեմատությունն արդեն իսկ առկա նմանակների հետ, տեղական և/կամ միջազգային շուկայում նրա մրցակցային առավելությունները,*

✓ ***շուկայական պահանջարկի գնահատականը, այդ թվում՝ շուկայի համառոտ վերլուծություն, շուկայի այն սեգմենտի գնահատականը, որը կարող է արդյունքը (արտադրանքը) զբաղեցնել*** *- նկարագրել տեղական և/կամ միջազգային շուկայի համառոտ վերլուծությունը՝ ներկայացնելով արդյունքի (արտադրանքի) զբաղեցնելիք սեգմենտը մոտակա հեռանկարում, շուկայի ֆինանսական ծավալների գնահատականը, շահութաբերության գնահատականը.*

- **ծրագրի**

✓ ***ֆինանսական արդյունավետության գնահատականը, այդ թվում՝ ներդրումների չափը կազմակերպության կողմից և արտաքին աղբյուրներից, ներդրումների վերադարձելիության ժամկետների կանխատեսումը*** *- նշել հնարավոր ֆինանսավորման աղբյուրները, այդ թվում՝ ներդրումների վերադարձելիության ժամկետների կանխատեսումը: Ծրագրի ֆինանսական արդյունավետությունը գնահատվում է այն փաստով, թե ինչ ժամկետում արդյունքի (արտադրանքի) ստեղծման համար արտաքին ֆինանսական ներդրումների պահանջ չի զգացվի,*

✓ ***իրականացմանն անհրաժեշտ մասնագետների առկայությունը կամ պատրաստման հնարավորությունները*** *– ներկայացնել առկա մասնագետների որակավորումը և աշխատանքային փորձը, իսկ նոր մասնագետների պատրաստման հնարավորությունները հիմնավորել անհրաժեշտ կադրեր պատրաստող կազմակերպությունների առկայությամբ,*

✓ **ռիսկերի գնահատականը** - *անհրաժեշտ է հնարավորինս ներկայացնել բոլոր տեսակի ռիսկերը՝ ֆինանսական, շուկայական պահանջարկի, կառավարման և մարդկային ռեսուրսների: Նկարագրել այն ռիսկերը, որոնք կարող են ծագել և ազդել ծրագրի իրականացման վրա, ինչպես նաև համեմատական գնահատական տալ ծրագրի իրականացման գլխավոր ռիսկին:*

---

* *Լրացվում է այն դեպքում, եթե կա կիրառական հետազոտության արդյունքի (արտադրանքի) հստակ տեսլական, կատարված են համապատասխան ուսումնասիրություններ տեղական և/կամ միջազգային շուկայում կամ ոլորտում/բնագավառում արդյունքի (արտադրանքի) առկա պահանջարկի (սպառողի) վերաբերյալ:*

** *Որպես կիրառական հետազոտությունների արդյունք (արտադրանք) կարող է ներկայացվել՝ տեխնոլոգիա, մեթոդաբանություն, ծառայություն, ծրագրային փաթեթ, փորձնական կամ լաբորատոր նմուշ, նախատիպ և այլն:*